

ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

2015-2018

ՎԱՆԱԶՈՐ

2015

ԱՄԲԻՈՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հանրապետության ապագան իրազեկ, նախաձեռնող, ստեղծագործ և պատասխանատու մասնագետներն են հասարակական կյանքի բոլոր բնագավառներում: Ամբիոնի առաքելությունն է կայուն ու գիտակցված դիրքորոշում ունեցող, հիմնարար գիտելիքներով, գործնական հմտություններով հմուտ պատմաբանների պատրաստումը, որոնք կարող են գիտական հետազոտություններ կատարել պատմության, մշակութային և քաղաքական ինստիտուտների ու շարժումների զարգացման բնագավառներում, ձեռք բերված գիտելիքները պետական ներքին և արտաքին քաղաքական որոշումների համար դարձնել մատչելի, խորհրդատվություն մատուցել այդ հարցերով: Ամբիոնի գործունեությունը միտված է բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստմանը, որոնք կարող են իրենց նպաստը բերել գիտության բնագավառում, մասնավորապես պատմական գրառումների, փաստաթղթերի, հնագիտական և մարդաբանական գտածոների և այլնի ուսումնասիրության ու վերլուծության հիման վրա հետազոտել մարդկային հասարակության, առանձին երկրների պատմական զարգացումը՝ ներառյալ տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլ բնագավառները: Ամբիոնն աշխատանքներ է տանում անձի համակողմանի զարգացման ուղղությամբ՝ հավատարիմ մնալով բուհի՝ ուսանողակենտրոն միջավայր ստեղծելու քաղաքականությանը:

ՏԵՍԼԱԿԱՆԸ

Ամբիոնի զարգացման տեսլականն է՝

2015-2018 թթ. ամբիոնը դարձնել Հայաստանի Հանրապետության կրթության բնագավառում եվրոպական չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին բավարարող, բարձրորակ պատմաբաններ թողարկող, գիտական հետազոտություններ, ուսումնասիրություններ, հրապարակումներ մշակումներ իրականացնող օղակ: Եվրոպական չափանիշներից է ամբիոնի դասախոսական կազմի և ուսանողների ակադեմիական շարժունության և փոխանակումների իրականացումը միջազգային կազմակերպությունների և գործընկեր համալսարանների հետ համագործակցությամբ: Այս ուղղությամբ ամբիոնն արդեն փորձ ունի և շարունակում է կապը այդ համալսարանների հետ: Ամբիոնում կատարվում են ներքին մոնիտորինգային հետազոտություններ՝ ուսանողների, դասախոսների և գործատուների շրջանում, որոնք հնարավորություն են տալիս հստակեցնել այն բացթողումները, որոնք առկա են ուսումնական գործընթացում:

Այս տեսլականի ներքո իրականացվելիք գործողություններն են՝

1. ա/ ձևավորել ամբիոնի կայուն զարգացումն ապահովող համակարգ. այս ուղղությամբ ամբիոնում իրականացվում է սերնդավիճակի գործընթաց, ամբիոնը ձգտում է հասնել միջազգային չափանիշներին բավարարող հետազոտական արդյունքների որակների բարելավմանը: Ամբիոնը, ունենալով գիտական համապատասխան ներուժ, ձգտում է բարձր մակարդակով կազմակերպել ուսուցման գործընթացը, զբաղվել գիտահետազոտական աշխատանքներով, յուրացնելու և աշխատանքային գործունեության ընթացքում կիրառելու նոր, կրթական ու տեղեկատվական տեխնոլոգիաներ:
2. բ. ձևավորել միասնական մոտեցում մարդ-քաղաքացու կրթության և դաստիարակության խնդիրները պատշաճ լուծելու նպատակով: Այս ուղղությամբ ամբիոնը շարունակելու է կազմակերպել միջոցառումներ, պարապմունքներ, որոնք ուսանողների մեջ կդաստիարակն բարոյական, ազգային ու համամարդկային բարձր արժեքներ: Ամբիոնի դասախոսները կշարունակեն դասախոսություններ կարդալ քաղաքի ուսումնական հաստատություններում, բուհի ֆակուլտետներում հայոց պատմության հրատապ հարցերի շուրջ: Ամբիոնը կշարունակի մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանն ուղղված իր ողջ գործընթացը

ԱՄԲԻՈՆԻ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆ

2015-2018թթ. նախատեսվում է շարունակել իրականացնել հասարակության արդի պահանջներին և եվրոպական չափանիշներին համապատասխանող կրթական ծառայությունների և ինտեգրված ծրագրերի ելքային կոմպետենցիաների վրա հիմնված բովանդակային և կառուցվածքային նորացման փուլային գործընթաց՝ այն կողմնորոշելով դեպի ուսուցման ուսանողակենտրոն համակարգի ստեղծմանը: Այդ քաղաքականությունը ներառում է՝

- բակալավրի և մագիստրատուրայի կրթական համակարգերի մի շարք մասնագիտական առարկաների դասավանդման ժամաքանակի և ստուգման ձևի նկատմամբ առկա մոտեցման վերանայումը՝ ելնելով այդ առարկաների հրատապությունից և կարևորությունից,
- բակալավրի և մագիստրոսի որակավորման համար նախատեսված ուսումնական պլանների վերանայումը և մի շարք նոր դասընթացների դասավանդման անհրաժեշտությունը՝ ելնելով պետական կրթական չափորոշիչներից և ժամանակակից պատմական գիտության մոտեցումներից ու նվաճումներից
- ամբիոնի աշխատակիցների պատասխանատվության բարձրացումը ավարտական և կուրսային աշխատանքները որակական նոր աստիճանի բարձրացնելու ուղղությամբ,
- ավարտական, կուրսային և ստուգողական աշխատանքների թեմատիկաների վերանայում՝ կապված հայոց և համաշխարհային պատմությունների արդի հիմնախնդիրների ներկայացրած ժամանակակից պահանջների հետ

2. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Պատմության ամբիոնի 2015-2018թթ. գիտահետազոտական գործունեության գլխավոր նպատակը առաջիկայում պետք է դառնա գիտական աշխատանքներ կատարելու բնագավառում հանրապետության բուհերի պատմության ամբիոնների թվում առաջատար և մրցունակ դիրքերը պահպանելը, ատենախոսությունների թեմաներ հաստատելու իրավունք ստանալը, ասպիրանտուրայի ընդունելություն կատարելը, գիտական հետազոտությունների, ուսումնասիրությունների և հրապարակումների քանակի ավելացումը:

- Խորացնել ամբիոնի «Հայոց և համաշխարհային պատմության հրատապ հիմնախնդիրներ: Ժամանակակից մոտեցումներ» գիտահետազոտական թեմայի ուսումնասիրության շրջանակները
- Իրականացնել գիտական աշխատանքների, դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, ուսումնամեթոդական գրականության, ընդհանուր և հատուկ դասընթացների մշակում
- քննարկել և վերանայել ամբիոնի դասախոսների կրթական, գիտահետազոտական, մեթոդական աշխատանքների անհատական պլանները, դրանք մշտապես համապատասխանեցնել ժամանակակից պատմագիտության պահանջներին

- գիտական քննարկումների արդյունքում պարբերաբար վերանայել ամբիոնի դասախոսների կազմած առարկայական փաթեթները և դասախոսական տեքստերը՝ ելնելով ժամանակակից պատմագիտության նվաճումներից ու ձեռքբերումներից
- իրականացնել բակալավրական և մագիստրոսական կրթության համար դասախոսությունների տեքստերի կազմում՝ հիմնված նախատեսվող նոր մասնագիտական առարկաների ու դասընթացների թեմատիկայի վրա

3. ՍՈՑԻԱԼ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉՍԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Դաստիարակչական հարցերը մշտապես գտնվել են ամբիոնի ուշադրության կենտրոնում: Այս ուղղությամբ ամբիոնը կշարունակի իր աշխատանքները նաև հետագայում՝ համագործակցելով ռեկտորատի, ֆակուլտետի խորհրդի, ուսխորհրդի հետ: Ամբիոնում կշարունակվեն հանդիպումներն ու աշխատաքները առաջին կուրսեցիների հետ, որոնց ընթացքում նրանք կծանոթանան իրենց պարտականություններին ու իրավունքներին, կրեդիտային համակարգով ուսումնառության առանձնահատկություններին: Ամբիոնը կշարունակի կազմակերպել առարկայական օլիմպիադաներ դպրոցականների հետ, մասնակցել ՈւԳԸ հանրապետական և բուհական գիտաժողովներին: Ակադեմիական խմբերի խորհրդատուները կկազմակերպեն արշավներ և այցելություններ պատմամշակութային օջախներ:

4. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ամբիոնի կրթական ծառայությունների որակի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանված են բակալավրիտի և մագիստրատուրայի շրջանավարտների պատրաստման պետական կրթական չափորոշիչներով:

Ամբիոնը առկա կրթական ծրագրերի կատարելագործման, կրթական աստիճանների որակի և չափորոշիչների ապահովման նպատակով մշակելու է քաղաքականություն և դրա իրականացման հետ առնչվող գործընթացներ: Այդ գործընթացները պետք է հետևողական նպաստեն աշխատանքում որակի կարևորությունը և ապահովումը գնահատող միջավայրի զարգացմանը: Դրան հասնելու համար ամբիոնը նպատակ ունի զարգացնելու և իրագործելու

որակի շարունակական ուժեղացման ռազմավարություն և քաղաքականություն, որոնք պետք է կարևորեն ուսանողի և բարձրագույն կրթության մասնակիցների դերը:

5. ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Առաջիկա տարիներին ամբիոնը իր հասարակական դերը կատարելու համար պետք է մշտապես հրապարակի քանակական և որակական նորացված, անաչառ, անկողմնակալ տեղեկատվություն իր առաջարկած ծրագրերի, դրանցից ակնկալվող արդյունքների, որակավորման աստիճանների, դասավանդման ժամանակ կիրառվող ուսումնառության, գնահատման ընթացակարգերի և կրթական հնարավորությունների մասին: Այդ նպատակով անհրաժեշտ է առավել հրապարակային դարձնել ամբիոնի գործունեությունը կրթական, ուսումնական, գիտական և մեթոդական ծրագրերի մշակման, դրանց վերանայման և հարստացման ուղղությամբ:

6. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՎՊՀ վերջին տարիներին նպատակային գործունեություն է ծավալում եվրոպական մի շարք երկրների և հետխորհրդային տարածաշրջանի տարբեր բուհերի և կազմակերպությունների հետ համագործակցության, միջազգային կապերի ստեղծման, զարգացման և ամրապնդման ուղղությամբ: Այս բնագավառում պատմության ամբիոնի գերակա խնդիրը համարել այդ համագործակցության շրջանակներում պատմության ֆակուլտետի դասախոսների և ուսանողների մասնակցությունը փոխանակման ծրագրերին, գիտական նստաշրջաններին, համաժողովներին, սեմինարներին, արտասահմանյան գիտակրթական ծրագրերին: Ամբիոնի դասախոսները գիտական աշխատանքներ են հրատարակում ԱՊՀ երկրների գիտական ամսագրերում: Ամբիոնի վարիչ Ֆ. Մովսիսյանը „Էրազմուս Մունդուս,, ծրագրի շրջանակներում մեկ ուսումնական տարի դասախոսություններ և սեմինար պարապմունքներ է անցկացրել Պոզնանի Ադամ Միցկևիչի անվան համալսարանի մագիստրոս Դանուտա Ստոյակի հետ, ղեկավարել է նրա մագիստրոսական ավարտական աշխատանքը:

2015 թ. հոկտեմբեր-նոյեմբերին „Էրագմուս Մունդուս,, նախագծի Էմինենս երկրորդ փոխանակման ծրագրի շրջանակներում ստացել է դրամաշնորհի և Պոզնանի Ադամ Միցկևիչի համալսարանում դասախոսություններ:

Պատմության բաժնի բակալավրիատի ուսանող Հենրի Մատինյանը կրթությունը շարունակել է ռումինիայում, Եաշի պետական համալսարանում, իսկ որպես մագիստրոս՝ մեկ ուսումնական տարի կրթություն ստացել Պոզնանի Ադամ Միցկևիչի անվան համալսարանում:

Պատմության բաժնի բակալավրիատի ուսանող Ռոբերտ Սարգսյանը ուսանել է Կրակովի Յագելսոնյան համալսարանում:

7. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ԱԶԱԿՑՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

Համակողմանի աջակցություն ցույց տալ բոլոր ֆակուլտետների ուսանողներն՝ ուսումնառության ընթացքում տարբեր ռեսուրսներից օգտվելու գործում: ՎՊՀ ղեկավարության հետ համատեղ գործնական քայլեր ձեռնարկել նյութական ռեսուրսների՝ համակարգչային սարքավորումների, տեխնիկական այլ միջոցների ձեռքբերման և դրանց արդյունավետ օգտագործման ուղղությամբ: Պարբերաբար հարստացնել գրադարանի և պատմության կաբինետի գրական ֆոնդը, ստեղծել մասնագիտական ֆիլմադարան հայոց և համաշխարհային պատմության հրատապ հիմնախնդիրների և պատմական գաղտնիքների ու առեղծվածների վերաբերյալ: Ապահովել նյութական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը ուսումնառության ընթացքում:

Առավել կարևորել և ակտիվացնել մարդկային ռեսուրսների՝ պրոֆեսորների, դոցենտների, դասախոսների, խորհրդատուների գործունեության օգտակար գործողության գործակիցը: Հասնել այն բանին, որ ուսումնառության ռեսուրսները մատչելի լինեն բոլոր ուսանողների համար և ծրագրված և նախատեսված լինեն նրանց կարիքներին, հետաքրքրություններին ու պահանջմունքներին համապատասխան: Դրանք մշտապես բավարարելու նպատակով իրականացնել մոնիթորինգ, որի

արդյունքում վերլուծել և բարելավել ուսանողներին մատուցվող օժանդակ
ծառայությունների արդյունավետությունը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ

Նպատակ	Խնդիր	Պատասխանատու /կատարող/	Համագործակցություն	Կատարման ժամկետը	Ակնկալվող արդյունքը /ցուցիչ/	Մպառնալիքներ , ռիսկեր
Կրթական գործունեություն						
1. Մասնագիտության կրթական ծրագրից ելնելով բարձրորակ պատմաբանների պատրաստում	Լրացուցիչ ԿԾ-ների ներդրում, մագիստրոսական նոր ծրագրի ներդրում մասնագիտության կրթական ծրագրի փորձաքննության անցկացում	Ֆ. Մովսիսյան Մ.Բրուտյան Ս.Աղաջանյան Ա. Բերնեցյան	Որակի ապահովման կենտրոն, հավատարմագրման պատասխանատու	2015-2018	ՄԿԾ հավատարմագրում	Աշխատաշուկայում պահանջարկի փոփոխության հետ կապված՝ ՄԿԾ-ների վերամշակման անհրաժեշտություն
Ուսումնամեթոդական գործունեություն						
Բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական նոր ծրագրերի կազմում	1. Պատմության դասավանդման, նրա մեթոդոլոգիական ձևավորման և մեթոդական հիմքերի ընդհանրացման գործընթացի ապահովում և դրանց համապատասխանեցում ժամանակակից կրթական չափանիշներին:	Ֆ. Մովսիսյան		2015-2018	բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական ծրագրերի Կատարելագործում և ուսումնամեթոդական ապահովում	Արտաքին շահակիցների թույլ արձագանքները գործընթացին
Դասախոսական կադրերի պատրաստում և նրանց որակավորման բարձրացում	ամբիոնի դասախոսական անձնակազմի համալրում՝ որակյալ գիտական աստիճան և կոչում ունեցող կադրերով	Ֆ. Մովսիսյան	ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ	2015-2018	Ամբիոնի դասախոսների գիտական աստիճանի և կոչման ապահովում	Դասախոսների վերապատրաստման ընթացակարգերի նոր լինուլը
	պրոֆեսորադասախոսական կազմի կոմպետենցիաների ամենամյա բարձրացում		Շարունակական կրթության կենտրոն		Բոլոր դասախոսների վերապատրաստում	

Գիտահետազոտական						
Գիտական և գիտա-մանկավարժական նորարարական ծրագրերի օժանդակություն և զարգացում	մենագրությունների, ուսումնական ձեռնարկների, ժողովածուների, գիտական հոդվածների պատրաստում	Ամբիոնի դասախոսներ		2015-2018	Գիտական ուսումնասիրությունների հրատարակում, դրանց քանակի ավելացում	Պետության կողմից գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման նվազում
Ուսանողական գիտական ընկերության աշխատանքների համակարգում	<ul style="list-style-type: none"> • Ուսանողական գիտաժողովների կազմակերպում • ուսանողական բանավեճային ակումբի ստեղծում 	Ֆ. Մովսիսյան Ա. Բերնեցյան	ՎՊՀ Ուսանողական գիտական ընկերություն	2015-2018	ՈՒԳԸ հանրապետական և բուհական գիտաժողովների անցկացում, գիտաժողովների նյութերի տպագրում	
Սոցիալ-դաստիարակչական աշխատանք						
Առարկայական օլիմպիադաների կազմակերպում	հրատապ խնդիրների քննարկում, կլոր սեղանների կազմակերպում	Ամբիոնի դասախոսներ	Լոռու մարզի կրթության վարչություն, հիմնական և ավագ դպրոցներ	2015-2018	Գործատուների հետ կապերի զարգացում	Հետադարձ թույլ կապի առկայություն
Դիմորդների հետ մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ	«Բաց դռների օր» խորհրդատվական աշխատանք դիմորդների հետ	Ամբիոնի դասախոսներ	Լոռու մարզի կրթության վարչություն, հիմնական և ավագ դպրոցներ	2015-2018	Դիմորդների քանակի ավելացում	Արտագաղթի հետ կապված՝ դիմորդների քանակի նվազում

Պատմության ամբիոնի վարիչ՝

Ֆ.Վ.Մովսիսյան

